

*File*

Որպէս զի ներկաներուն ժամանակը շատ չառնեմ, իմ ըսելիքներս կը սահմանափակեմ միայն այն խնդիրներուն շուրջ որոնք կը բղխին իմ պաշտօնակատարութենէս ոչ ատկէ յառաջացած փորձառութենէս:

**Զարգելի Ատենապետ Եւ Պատօներկայք**

Ինչպէս անցեալ տարիներ, նոյնպէս եւ անցնող 1948 տարուան ընթացքին իմ եւ Պատօնաբարձութեան, ԵկեղօՏիկնանց Միութեան, Կրթական Միութեան, Դպրաց Դասին, ԵկեղօՅերիտօ Միութեան եւ բոլոր ժողովրդեան հետ իմ յարաբերութիւնս եղած է շատ սիրաւիւրօՅեկեղեցիին ընթացքը բնականոն, չնգաբարձութիւնն ու միւս Մարմինները ըրած են իրենց Լաւագոյնը իրենց վստահուած գործերը յաջողութեամբ վերջանորելու, եւ յայտնելով իմ գոհունակութիւնս կը մաղթեմ, որ Տէրը պարգեւէ իրենց եւ իմ սիրելի ժողովրդեանս յաջողութիւն եւ երջանկութիւն: Անցնիւք զմեզ հետաքրքրող խնդիրներուն:

**Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ** — Հակառակ որ Եկեղեցիին Բեմէն յաճախ խօսած եմ Ս. Հաղորդութիւն առնելու մասին, դժբաղդաբար մեր ժողովուրդը շատ անհոգ կը գտնուի: Տղամարդոցմէ Ս. Հաղորդութիւն առնողները այնչափ քիչ են, որ ասոնք բացառութեանց կարգին կընանք դնելով իրենքն են միայն, որ կը մերձեան Ս. Ճաշակին, բայց ոչ ակնկալեալ չափով: Եւ չեմ արդարացներ, իբր չքմեղանք, ինձի ըսուած "ԵՍ ԻՆՔՁԻՆՔ Ս ԱՐԺԱՆԻ ՁԵՍՂԱՄԱՐԻՐ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼՈՒ" խօսքը:

Հիւանդներուն Ս. Հաղորդութիւն տալու կը կանչուիմ, յաճախ այն ժամանակ երբ հիւանդը հոգեվարք է, ու շախորոյս, եւ ինչու՞ չեմ կանչուիմ երբ առողջ է, երբ դեռ նոր է հիւանդացած, երբ խելքը գլուխին է եւ զղջումի ու մեղայի գիտակից վիճակին մէջ է, ու այս անհոգութեան արդարացումն ալ գտնուած է, թէ "Եթէ հիւանդը տեսնէ որ Բահանան եկած է կը վախնայ թէ պիտի մեռնի" ու չեն կանչեր:

**ՄԿՐՏՈՒԹԻՒՆ** — Մեր թեմին մէջ 1-2 ամսական երեխաներէն սկսած մինչեւ 10-20-30-40 եւ 42 տարեկաններ մկրտելու եմ այս վերջինները, ի հարկէ տուններուն մէջ, եւ թակայ ներկաներուն ծիծաղին, իսկ այս ծիծաղը երբեք կապ չունի երկիւղած այն ուրախութեան հետ զոր կուսնայ ժողովուրդը, քանի մը շաբթուան երեխային մկրտութեան ատեն:

Մեծերուն մկրտութիւնը մկրտուողին մէջ երկու բան կը յառաջացնէ, կամ զայրոյթ եւ կամ ծիծաղ. այս երկուքն ալ շնորհընկալի շրջագծէն դուրս են:

**ՊՍԱԿ** — Մեր ժողովուրդին մէկ մասին համար պսակը Խորհուրդը ըլլալէ դադրած եղած է ՀԱՆԻՒՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ, եւ այդպիսիները կը քաջալերուին ալ ոմանց կողմէ, եւ թաղերէլ տալով, թէ Աստուած քահանային աղօթքին կարելուութիւն չտար, բայց վարդապետին, եպիսկոպոսին աղօթքը անպատճառ կը Լսէ, քանի որ անոնք ՀԱՆԻՒՄԱՒՈՐ ՁԵՒՈՎ կաղօթեն, եւ այսօր մեր Եկեղեցին անցեալ տարիներու վարդապետին տեղ եպիսկոպոս մ'ունի որպէս ՊՍԱԿԱԳԻՐ ԲԱՀԱՆԱՅ, եւ որուն կատարած պսակներուն թիւը թեմին հովիւին կատարածէն աւելի է, եւ քանի որ վճարքները շատ առատ են յոգնութիւնը կարդարանայ:

**ՏՆՕՐ ՀՆԵՆՔ** — Տնօրհանները դադրած է հոս կըօնական արժէք ըլլալէ:

**ԴՊՐԱՑ ԴԱՍ** — Մեր Եկեղեցիին Դպրաց Դասը, այսօր, ամերիկահայ դպրաց դասերէն Լաւագոյններէն մէկն է, եւ կանգնած է Լաւագոյնը ըլլալու ճամբուն վրայ, շնորհիւ մեր Դպրապետ Պ. Խոսրով Համամճեանի թափած աշխատանքին ու վարողութեան: Դպրաց Դասին հետ են նաեւ մեր Ուրարակիւր Սարկաւազները, Պ. Գրիգոր Պէտտիեան եւ Պ. Յովհաննէս Սալոնճեան, որոնց կա-

տարած աշխատութիւնը պէտք է գնահատութեան արժանանան, իսկ մեր Լուսարար Պ. Պօղոս Շահ-  
Նազարեան կողմէ ընել ամէն բան, եւ կ'ընէ իր պակասած ուժին սահմանին մէջ ինկողները:

ՁԱՆԱՁԱՆԲ.— Կարգադրած եմ ընտանեկան երկու Լուրջ խնդիրներ, որովհետեւ կան-  
չուած եմ ճիշտ ժամանակին: Այցելած եմ հիւանդներուն տուներ եւ հիւանդանոցներ, իհարկէ  
անոնց որոնց մասին Լուր տրուած է ինձի: Նախագահած եմ Հոգաբարձութեան բոլոր, իսկ միւս  
Մարմիններուն ալ շատ ժողովներուն:

ԿԱՐԳԵՐ.— Տարուանս ընթացքին տեղի ունեցած են Մկրտութիւններ 50 հատ. Պսակներ  
26, եւ Թաղումներ 27:

Պատ. Հոգաբարձութեան տեղեկագիրը իմս ալ ըլլալով, առանձնակի կերպով չեմ խօսիլ  
հոն. շոշափուած խնդիրներուն մասին, եւ օրհնելով մեր Տիրոջ անուամբ <sup>հաւատարմութեամբ</sup> բոլոր ժողո-  
վուրդը, Մարմիններն ու Կազմակերպութիւնները, Աղօթքով կը յանձնեմ ամէնքը Տեր Աստու-  
ծոյ խնամքին ու բարեգթութեան:

Հովիւ Իւսիւր Սիտի Ս. Խաչ Եկեղեցւոյ

*Խաչիկ Մարտիրոս*

1949 Յունուար 16  
Իւսիւր Սիտի. Ն. Զ.